

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Արմավիրի մարզի Լուսազյուղի գյուղապետի 2014թ. 1-ին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

2014թ. հուլիսի 15-ին, ժամը 11⁰⁰-ին տեղի ունեցավ Լուսազյուղի գյուղապետի 2014թ առաջին կիսամյակի հաշվետվությունը:

Նիստին մասնակցում էին ավագանու անդամները, համայնքի 25 բնակիչներ և ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Մովսես Քարտաշյանը:

Ձեկ. գյուղապետ՝ Սարիբեկ Կարապետյան

2014թ. Լուսազյուղ համայնքի վարչական բյուջեով հաստատվել են տարեկան եկամուտներ, ընդամենը 22547.4 հազ. դրամ, որից՝

ա/ հողի հարկ՝	3600,0 հազ. դրամ,
բ/ գույքահարկ՝ ընդամենը	1295.0 հազ. դրամ,
որից՝ շինության գույքահարկը՝	365.0 հազ. դրամ,
փոխադրամիջոցների գույքահարկը՝	930.0 հազ.դրամ,
գ/ վարձակալական հողի հարկ՝	300.0 հազ. դրամ,
դ/ դոտացիա	17142.4 հազ. դրամ,
ե/ տեղական տուրք	210,0 հազ. դրամ,

2014թ. Լուսազյուղ համայնքի ֆոնդային բյուջեով հաստատվել են տարեկան եկամուտներ, ընդամենը 13764.3 հազ. դրամ, որն առաջացել է տարեսկզբի ազատ մնացորդից:

2014թ. սեփական եկամուտները հաստատվել են տարեկան 5405.0հազ.դրամ;

2014թ.1-ին կիսամյակի վարչական բյուջեի եկամուտները հաստատվել և

կատարվել են հետևյալ չափերով, ընդամենը՝ հաստատվել է 10021.1 հազ. դրամ,

կատարվել է 9554.3 հազ. դրամ կամ 95.4 %-ով , որից

1. հողի հարկը հաստատվել է 800,0 հազ. դրամ՝

կատարվել է 524.4 հազ. դրամ կամ 65.6 %,

2.Շինությունների գույքահարկը հաստատվել է 80.0 հազ. դրամ՝

կատարվել է 38.9 հազ. դրամ կամ 48.6 %,

3.Մեքենաների գույքահարկը հաստատվել է 450.0 հազ. դրամ՝

կատարվել է 301.3 հազ. դրամ կամ 67.0 %,

4. վարձակալ. հողի հարկը հաստատվել է 15.0 հազ. դրամ՝

կատարվել է 3.6 հազ. դրամ կամ 24.0 %,

5. դոտացիան հաստատվել է 8571.1 հազ. դրամ՝

կատարվել է 8571.1 հազ. դրամ կամ 100%,

6. տեղական տուրքեր հաստատվել է 105,0 հազ. դրամ՝

կատարվել է 105.0 հազ. դրամ կամ 100.0 %,

7. այլ ոչ հարկային եկամուտների պլան չի հաստատվել,

կատարվել է 10,0 հազ. դրամ,

2014թ. 1-ին կիսամյակում ֆոնդային բյուջեի մուտք չի եղել:

2013թ.1-ին կիսամյակի եկամուտները հաստատվել և կատարվել են հետևյալ չափերով՝

ընդամենը՝ հաստատվել է 1-ն կիսամյակում 8325.6 հազ.դրամ

կատարվել է 8091.6 հազ. դրամ կամ 97.2% , որից՝

1. հողի հարկը հաստատվել է 700.0 հազ. դրամ՝

կատարվել է 641.5 հազ. դրամ կամ 91.6 %,

2.գույքահարկը հաստատվել է 380.0 հազ. դրամ՝

կատարվել է 266.5 հազ. դրամ կամ 70.1 %,

3. վարձակալ. հողի հարկը հաստատվել է 70.0 հազ. դրամ՝

կատարվել է 0.0 հազ. դրամ կամ 0.0 %,

4. դոտացիա հաստատվել է 7070.6 հազ. դրամ՝

կատարվել է 7070.6 հազ. դրամ կամ 100%,

5. տեղական տուրքեր հաստատվել է 105.0 հազ. դրամ՝

կատարվել է 105.0 հազ. դրամ կամ 100.0%,

6. այլ ոչ հարկային եկամուտներ պլան չի հաստատվել,

կատարվել է 18.0 հազ. դրամ:

Սեփական եկամուտները 2014թ. 1-ին կիսամյակում հաստատվել են 1450.0 հազ. դրամ, կատարվել է 983.2 հազ. դրամ կամ 67.8 %:

Սեփական եկամուտները 2013թ. 1-ին կիսամյակում հաստատվել են 1255.0 հազ. դրամ, կատարվել է 1021.0 հազ. դրամ կամ 81.3 %:

2014թ. 1-ին կիսամյակի սեփական եկամուտների պլանը 2013թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել են 195.0 հազ. դրամ: Փաստացի եկամուտները պակասել են 37.8 հազ. դրամ կամ 13.5%:

2014թ հողի հարկի փաստացի եկամուտը 2013թ. համեմատությամբ պակասել է 117.1 հազ.դրամով, գույքահարկի գծով եկամուտը ավելացել է 73.7 հազ.դրամով: Վարձակալական հողի հարկի փաստացի եկամուտը ավելացել է 3.6 հազ.դրամով, տեղական տուրքն ունի նույն ցուցանիշը:

Դոտացիայի գումարը ավելացել է 1500.5 հազ.դրամով:

2014թ. 1-ին կիսամյակում կատարվել են հետևյալ ծախսերը՝ տեղական ինքնակառավարման ապարատի պահպանման համար.

ա/ աշխատավարձ	4114.9 հազ. դրամ,
բ/ կապի ծառայություն	17.0 հազ. դրամ,
գ/ գրասենյակային նյութեր	33.6 հազ. դրամ,
դ/ ներքին գործուղում և ծառ. ուղևորութ.	56.7 հազ. դրամ,
ե/ էլեկտրատեղակայում	254.5 հազ. դրամ,
զ/ տրանսպորտային նյութեր	240,0 հազ. դրամ,
է/ համակարգչային ծառայություն	28,8 հազ. դրամ,
ը/ ընդհանուր բնույթի ծառայ.	103.0 հազ. դրամ,

թ/ սարքավորումների ընթ. նորոգում 14.0 հազ. դրամ

ժ/ տեղեկատվական ծառայություններ 60.0 հազ. դրամ:

Սոց. ապահովագրության ծրագրերով տրվել են ֆինանսական օգնություն համայնքի նյութապես վատ վիճակում գտնվող տասնհինգ բնակիչների, այդ թվում՝ զոհված ազատամարտիկի ծնողի, արցախյան պատերազմի հաշմանդամի ծնողի, համայնքի մահացած բնակիչների ընտանիքների անդամներին, ընդամենը՝ 580.0 հազ.դրամ:

Նվիրատվություն կատարելու համար ծախսվել է 100.0 հազ. դրամ:

Աղբահանության աշխատանքների կատարման համար 2014թ. 1-ին կիսամյակում ծախսվել է 400,0 հազ. դրամ:

Գրադարանային ծառայության համար ծախսվել 297.6 հազ.դրամ:

Մայիսի 9-ի տոնի առթիվ միջոցառում կազմակերպելու համար ծախսվել է 250,0 հազ. դրամ:

Նախադպրոցական կրթության ծրագրով տրվել է դրամաշնորհ «Լուսազյուղի միջն. դպրոց» ՊՈԱԿ-ին 270.0 հազ. դրամ:

Մանկապարտեզի շենքի կապիտալ նորոգման 2-րդ փուլի աշխատանքների համար ծախսվել է 4768.4 հազ.դրամ:

2014 թ. 1-ին կիսամյակի ընթացքում գյուղապետարան մուտք է եղել 100, ելք՝ 70 փաստաթուղթ:

Հրավիրվել և անցկացվել է ավագանու 5 նիստ:

Ընդունվել է գյուղապետի 20 որոշում և արձակվել՝ 5 կարգադրություն:

Արձակվել է աշխատակազմի քարտուղարի 17 հրաման:

Քաղաքացիներին տրվել են 137 տեղեկանքներ:

Չնայած կատարված աշխատանքներին համայնքում չլուծված գերկարևորագույն խնդիրներից է մնացել .

1. նոր դպրոցի կառուցումը,
2. ոռոգման նպատակով պոմպակայանի կառուցումը,
3. մանկապարտեզի համար գույքի ձեռք բերումը,
4. կենտրոնական ճամպարանի կապիտալ նորոգումը՝ 550 գծ.մ. երկարությամբ:

Լուսազյուղի գյուղապետ

Ս. Կարապետյան

Աշխատակազմի քարտուղար

Մ. Առաքելյան